ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 մայիսի 2025 թվականի N 567 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 2036-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող սերուցքային կարագի նկատմամբ սակագնային արտոնություն կիրառելու, ներմուծման բաշխման կարգը, մեկանգամյա և գլխավոր լիցենզիաների ձևերը հաստատելու մասին» N 2036-Ն որոշման N 1 հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ լրացումները՝

1) հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 16.1-ին, 16.2-րդ, 16.3-րդ, 16.4-րդ, 16.5-րդ և 16.6-րդ կետերով.

«16.1. Հայտատուները 2025 թվականի մայիսի 13-ից մինչև մայիսի 16-ը իրավունք ունեն հրաժարվելու իրենց հատկացված ներմուծման թույլատրելի ծավալից՝ ամբողջությամբ՝ սույն կարգի 31-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն: Հայտատուները 2025 թվականի մայիսի 13-ից մինչև մայիսի 16-ը իրավունք ունեն

մասնակի հրաժարվելու իրենց հատկացված ներմուծման թույլատրելի ծավալից: Այն դեպքում, երբ հայտատուն հրաժարվում է իրեն հատկացված ներմուծման թույլատրելի ծավալից մասնակի, տրամադրված լիցենզիայի գործողությունը դադարեցվում է և 2 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում է նոր լիցենզիա, որտեղ նշվում է իրեն հատկացված ներմուծման նոր թույլատրելի ծավալը: Հայտատուին հատկացված ծավալից հրաժարվելու մասին դիմումը ներկայացվում է լիազոր մարմին էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային հասցեն՝ secretariat@mineconomy.am), փոստային առաքմամբ կամ առձեռն: Էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում դիմումն անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

16.2. Ներմուծման թույլատրելի ծավալի չբաշխված քանակությունից ներմուծման նոր թույլատրելի ծավալ ստանալու համար հայտատուները 2025 թվականի մայիսի 19-ից մինչև մայիսի 23-ը լիազոր մարմին են ներկայացնում հայտ՝ սույն կարգի 19-րդ կետի պահանջներին համապատասխան, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2024 թվականի նոյեմբերի 29-ի N 106 որոշմամբ նախատեսված՝ արտոնության տրամադրման պայմանների պահպանումը հավաստող փաստաթուղթ:

16.3. Սույն կարգի 16.1-ին կետի համաձայն՝ չբաշխված ներմուծման թույլատրելի ծավալը լիազոր մարմնի կողմից բաշխվում է՝

1) պատմական գնորդների համար՝ սույն կարգի 8-րդ կետի պահանջներին համապատասխան.

2) արտաքին տնտեսական գործունեության այլ մասնակիցների միջև՝ հավասարաչափ, բայց ոչ ավելի, քան իր կողմից խնդրարկված ծավալը:

16.4. Սույն կարգի 16.2-րդ կետի պահանջներին համապատասխան հայտ ներկայացրած արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների միջև ներմուծման թույլատրելի ծավալը բաշխվում է՝ լիազոր մարմին ներմուծման համար արտաքին տնտեսական գործունեության մասնակցի կողմից դիմում-հայտ ներկայացվելու ժամկետի ավարտից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:

16.5. Լիազոր մարմինը՝

1) 16.1-ին կետում նշված ժամկետի ավարտից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում մաքսային ոլորտի լիազոր մարմնին է տրամադրում տեղեկատվություն՝ սույն որոշման 16.1-ին կետում նշված հայտատուների վերաբերյալ՝ նշելով արտաքին տնտեսական գործունեության մասնակցի անվանումը (անուն, ազգանունը), ՀՎՀՀ-ն, լիցենզիայի համարը, տրման ամսաթիվը, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեության մասնակցի՝ սկզբնական ծավալի, հրաժարված ծավալի և վերջնական (ճշտված) ծավալի վերաբերյալ տեղեկատվությունը.

2) սույն կարգի 16.4-րդ կետում նշված ժամկետի ավարտից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում մաքսային ոլորտի լիազոր մարմնին է տրամադրում ամփոփ տեղեկատվություն խնդրո առարկա արտոնությունից օգտվելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 19-ի N 2036-Ն որոշման ընդունման օրվանից սկսած՝ լիցենզավորված բոլոր արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների անվանման (անուն, ազգանուն), ՀՎՀՀ-ի, լիցենզիայի համարի և ծավալի, արտոնության սկզբնական ծավալի, հրաժարված ծավալի (առկայության դեպքում), վերջնական (ճշտված) ծավալների վերաբերյալ: 2025 թվականի մայիսի 13-ից մինչև մաքսային ոլորտի լիազոր մարմնին սույն ենթակետով նախատեսված տեղեկատվության ներկայացման օրը, սույն որոշմամբ սահմանված արտոնությամբ ձևակերպումներ չեն իրականացվում:

16.6. Հայտատուն մաքսային ոլորտի լիազոր մարմին է ներկայացնում լիազոր մարմնից ստացված լիցենզիան:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

12.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ